ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ, ԿԱՊԻ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

N 08/15.3/7105-09

«31» .....05.....2019 թ.

«ԱՐՄՍՏՐՈՅ» ՍՊԸ-ի տնօրեն
պրն. Ա.ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Առաքելյան

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության և «ԱՐՄՍՏՐՈՅ» ՍՊԸ-ի միջև 2019 թվականի ապրիլի 15-ին կնքված թիվ «ՏԿՏՏՆ-ԳՀԱՇՁԲ-2019/7Ն-3» ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետև՝Պայմանագիր) շրջանակներում Ձեր ընկերությունը մինչև 2019 թվականի մայիսի 5-ը պետք է իրականացներ Մ-10, Սևան–Մարտունի-Գետափ միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ5+750-կմ5+886 հատվածի հողային պաստառի վերականգնման և մետաղական արգելափակոցների տեղադրման, Մ-10, Սևան–Մարտունի-Գետափ միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ6+850-կմ7+034 հատվածի հողային պաստառի վերականգնման և մետաղական արգելափակոցների տեղադրման, Հ-64, Բերդ-Արծվաբերդ-Չինարի ավտոճանապարհի 18-րդ կիլոմետրում փլուզված հողային պաստառի վերականգնման և մինչև 2019 թվականի մայիսի 15-ը՝ Հ-5, /Հ-6/-Նոր Գեղի–Արգել–Արզական–Հրազդան հանրապետական նշանակության ավտոճանապարհի կմ36+000–կմ36+700 հատվածի հիմնանորոգման, Տ-1-45, Ապարան–Ձորագլուխ ավտոճանապարհի Ձքնաղ–Ձորագլուխ /5,4կմ/ հատվածի հիմնանորոգման նախագծերի պատրաստման, ծախսերի գնահատման աշխատանքներ, ինչը պայմանագրով սահմանված ժամկետներում չի կատարել:

Հիմք ընդունելով «ՏԿՏՏՆ-ԳՀԱՇՁԲ-2019/7Ն-3» ծածկագրով կնքված պայմանագրի 2.1.3 կետի պահանջները՝ ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությունը որոշեց 2019թ.-ի մայիսի 31-ին միակողմանի լուծել «ՏԿՏՏՆ-ԳՀԱՇՁԲ-2019/7Ն-3» ծածկագրով գնման պայմանագիրը:

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Վազգեն Սարգսյան 3/3, հեռ.՝ (37410) 590009, էլ. փոստ՝ samvel.amirkhanyan@mtcit.am

Տեղեկացնում եմ, որ «Արմստրոյ» ՍՊԸ-ն պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց 5 (հինգ բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական «900005000758» հաշվեհամարին փոխանցել գանձման ենթակա 596,000 ՀՀ դրամը որպես տուժանք՝ պայմանագրի կատարման ապահովում (պայմանագրի ընդհանուր գումարի 10%):

Հարկ եմ համարում նաև նշել, որ համաձայն ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 33-րդ կետի 16-րդ ենթակետի՝ Պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ ծանուցումը սահմանված կարգով կհրապարակվի www.procurement.am պաշտոնական տեղեկագրում:

Միաժամանակ հայտնում եմ, որ հնարավոր տույժերի և տուգանքների վերաբերյալ լրացուցիչ կտեղեկացվի:

Հարգանքով՝ **Ս. ԱՄԻՐԽԱՆՅԱՆ**

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

8/31/2019

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՍԱՊԵԼ

Signed by: AMIRKHANYAN SAMVEL 2210540046

Կատարող՝ Ֆինանսական վարչություն
Պետ՝ Վ.Աթյան
(010)-59-01-11

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Վազգեն Սարգսյան 3/3, հեռ.՝ (37410) 590009, էլ. փոստ՝ samvel.amirkhanyan@mtcit.am